ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

24.11.2025թ. կնքված N ՀՀԲԿ-ՀՄԱԽԾՁԲ-25/6 գնման պայմանագրի

ք. Երևան 17.12.2025թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ. Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Վենյուէրա Հոլդինգ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Նորբերտ Զատկոյի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 2025 թվականի նոյեմբերի 26-ի N 01/26/24783-2025 գրությունը և Վանաձորում ՈՒԵՖԱ ստանդարտներով ֆուտբոլի մարզադաշտի կառուցման/վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության մատուցման համար Կողմերի միջև 24.11.2025թ. կնքված N ՀՀԲԿ-ՀՄԱԽԾՁԲ-25/6 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 4.1 կետի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

<<4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 593 040 (հինգ հարյուր իննսուներեք հազար քառասուն) եվրո, որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի գործող արտարժույթային փոխարժեքի հաշվարկով կազմում է 264 365 371 (երկու հարյուր վաթսունչորս միլիոն երեք հարյուր վաթսունհինգ հազար երեք հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: 494 200 (չորս հարյուր իննսունչորս հազար երկու հարյուր) եվրոյին համարժեք 220 304 476 (երկու հարյուր քսան միլիոն երեք հարյուր չորս հազար չորս հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամը Պատվիրատուն պետք է վճարի Կատարողին, իսկ 98 840 (իննսունութ հազար ութ հարյուր քառասուն) եվրոյին համարժեք դրամը՝ ՀՀ պետական բյուջե,

1.1.2 Պայմանագրի տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցում <<593 040 եվրո>> թվից և բառից հետո ավելացնել <<264 365 371 ՀՀ դրամ>> թիվը և բառերը,

1.1.3 2025 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը կազմված են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Վենյուէրա Հոլդինգ>> ՍՊԸ
ք. Երևան, հանրապետության հրապարակ	Ռոբոտնիցկա 286, Պովագսկա Բիստրիցա
կառավարական տուն 3	017 01, Սլովակիա
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ SK72 0900000005239753437
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 2024129701
Հ/Հ 900011055424	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Գ. Եղիազարյան	_____ Ն. Զատկո
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
24.11.2025թ. կնքված
N ՀՀԲԿ-ՀՄԱԽԾՁԲ-25/6 գնման պայմանագրի
17.12.2025թ. կնքված N 1 համաձայնագրի

<< Հավելված N 2
24.11.2025թ. կնքված
N ՀՀԲԿ-ՀՄԱԽԾՁԲ-25/6 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Եվրո/ՀՀ դրամ

Ծառայության														
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/71	ՀՀ Տավուշի մարզի Վանաձորում ՈՒԵՖԱ ստանդարտներով ֆուտբոլի մարզադաշտի կառուցման/վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	98 840/ 44 060 895	98 840/ 44 060 895

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:>>:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011055424
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

Գ. Եղիազարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Վենյուէրա Հոլդինգ>> ՍՊԸ
Ռոբոտնիցկա 286, Պովագակա Բիստրիցա
017 01, Սլովակիա
Հ/Հ SK72 0900000005239753437
ՀՎՀՀ 2024129701

Տնօրեն՝

Ե. Զատկո
(ստորագրություն)

Կ.Տ.